

ARM SWISS BANK
Private & Investment Banking

Ա
Ր
Մ
Ս
Վ
Ի
Ս
Բ
Ա
Ն
Կ

2005

**ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**



ARM SWISS BANK
Private & Investment Banking



2
0
0
5

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ

ՏՐԵԿԱՆ 1 ԸՆԴՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեր **տեսլականն** է լինել Հայաստանի առաջատար ունիվերսալ բանկ, որը համատեղում է կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային ծառայությունների առավելությունները՝ նպաստելով իր հաճախորդների, գործընկերների և բաժնետերերի համար լավագույն արդյունքների ձևավորմանը:

Մեր **առաքելությունն** է նպաստել մեր կորպորատիվ և անհատ հաճախորդների բարգավաճմանը՝ մատուցելով միջազգային բանկային պրակտիկայում ընդունված և նրանց պահանջներին համապատասխանող բարձրակարգ ֆինանսական լուծումներ:

Մեր բիզնես-փիլիսոփայության հիմնարար **արժեքներն** են.

Հաճախորդի կարևորում

Պրոֆեսիոնալիզմ

Շրջահայացություն

Գործընկերություն

Կոնֆիդենցիալություն

Շիտակություն

*Private
Banking*

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը որպես փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրվել է 2004 թվականի սեպտեմբերին շվեյցարացի գործարար Վարդան Սիրմաբեսի կողմից: Առաջին աշխատակիցների ներգրավումը սկսվել է նոյեմբերի 22-ից, իսկ բուն բանկային գործունեությունը Բանկը սկսել է իրականացնել 2005 թվականի մարտից:

2005թ. -ը եղել է Բանկի կայացման տարի և ահա թե ինչ է հաջողվել իրականացնել այդ տարում:

Հունվար	Աշխատակազմի ձևավորում Աշխատանքային և տեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում Բանկի գործունեությունը կանոնակարգող 50-ից ավելի ներքին ակտերի մշակում
Փետրվար	ՀՀ ԿԲ-ի կողմից տրված բանկային գործունեության # 84 լիցենզիայի ստացում
Մարտ	Միացում միջբանկային CBANet ցանցին Միացում Հայաստանի միջբանկային էլեկտրոնային վճարումների համակարգին ՀՀ պետական արժեթղթերով առաջին գործառնությունների իրականացում
Ապրիլ	Թղթակցային հաշիվների բացում Commerzbank-ում Թղթակցային հաշիվների բացում Raiffeisen Zentralbank-ում Հաճախորդի առաջին հաշվի բացում
Մայիս	Դեպո հաշվի բացում Raiffeisen Zentralbank-ում Թղթակցային հաշիվների բացում UBS բանկում Միջազգային վճարումների RZB Fast և UBS KeyLink համակարգերի տեղադրում Առաջին վարկի տրամադրում
Հունիս	Անդամակցում ՀՀ բանկերի միությանը Թղթակցային հաշիվների բացում International Moscow Bank-ում
Հուլիս	Bloomberg համակարգի ներդրում Reuters Wealth Manager համակարգի ներդրում
Օգոստոս	Արտասահմանյան արժեթղթերի ձեռքբերման առաջին գործարք
Սեպտեմբեր	Թղթակցային հաշիվների բացում Rietumu Bank-ում ՀՀ պետական պահառուական արժեթղթերի դիլերի կարգավիճակի ստացում Անդամակցում SWIFT միջազգային փոխանցումների համակարգին
Հոկտեմբեր	Միջազգային ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացման առևտրային համակարգի գործարկում Միջազգային ֆինանսական շուկայում առաջին ռեպո համաձայնագրի կնքում
Նոյեմբեր	Մասնակցություն Հայաստանի ֆոնդային բորսայի սակարկություններին Առաջին ժամկետային ավանդի ընդունում
Դեկտեմբեր	«Բանկ-Հաճախորդ» համակարգի ներդրում և գործարկում

*Investment
Banking*

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Խորհրդի Նախագահի ուղերձը	6
Փրայվիթ բենքինգը - Բիզնես-փիլիսոփայություն	9
Գործունեության հիմնական ուղղությունները	10
Կորպորատիվ կառավարումը	15
Անձնակազմի կառավարումը	17
Ռիսկերի կառավարումը	19
Հաճախորդներ և գործընկերներ - Գործունեության հիմնաքար	21
Տեղեկատվական տեխնոլոգիաները	23
Ֆինանսական արդյունքներ	27

ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՉԸ ԲԱՆԿԻ ՀԱՃԱԽՈՐԳՆԵՐԻՆ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հարգելի տիկնայք և պարոնայք

Պատիվ ունենք Ձեզ ներկայացնել ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ-ի առաջին հրապարակային տարեկան հաշվետվությունը:

Այս հաշվետվությունում մենք ներկայացրել ենք Բանկի տեսլականը, առաքելությունը, այն արժեքները, որոնցով առաջնորդվում ենք մեր գործունեության ընթացքում և, իհարկե, արտացոլել այն ամենը, ինչ իրականացրել և ինչ ձեռքբերումներ է ունեցել Բանկը 2005 թվականի ընթացքում:

ԱՐՄՄՎԻՍԲԱՆԿ-ը հիմնադրվել է որպես ունիվերսալ բանկ, որպեսզի համատեղելով կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային ծառայությունների մատուցումը, ապահովի լավագույն արդյունքների ձևավորում իր շահառու կողմերի համար, որոնք են՝ բաժնետերերը, հաճախորդները, գործընկերներն ու անձնակազմը: Նախապես ուրվագծելով շուկայում իր ուրույն տեղը՝ Բանկը նպատակ ունի կիրառելով միջազգային լավագույն փորձը, զարգացնել և խթանել ներդրումային և փրայվիթ բանկային ծառայությունների մատուցումը՝ շարունակաբար ներդնելով և առաջարկելով Հայաստանի բանկային համակարգում նոր տիպի գործիքներ:

Անցած տարին Բանկի համար շատ վճռորոշ էր: Այդ տարում դրվեց Բանկի ապագա հաջողությունների և զարգացման հեռանկարների հիմքը: 2005 թվականին Բանկը նախ կազմավորվեց որպես կազմակերպություն, այնուհետև՝ փետրվարի 25-ին, ի ուրախություն բոլորիս, Բանկը ՀՀ կենտրոնական բանկից ստացավ բանկային գործունեության լիցենզիա:

Մենք մուտք գործեցինք ՀՀ բանկային համակարգ 3 միլիարդ ՀՀ դրամ փաստացի համարված կանոնադրական կապիտալով, փորձառու և առաջադեմ անձնակազմով, լուրջ նպատակներով:

Շատ կարճ ժամանակահատվածում Բանկը ստեղծեց գործուն կազմակերպական կառուցվածք, կառավարման ենթակառուցվածքներ, տեխնիկական համակարգեր, հավաքագրեց պրոֆեսիոնալ անձնակազմ: Բանկն աշխատում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային արժեթղթերի և արտարժույթի շուկաներում, իրականացնում է ՀՀ տնտեսության վարկավորում, առաջարկում է նոր տիպի ներդրումային գործիքներ:

Բանկն արդեն իսկ ձևավորել է տեղական և օտարերկրյա քրթակից բանկերի ընդգրկումն ցանց, որն ապահովում է ներկա փուլում իրականացվող գործունեության արդյունավետությունը և շարունակականությունը:

Իր առջև դրված նպատակները և խնդիրները լավագույնս լուծելու համար, Բանկը միացել է ինչպես ներքին, այնպես էլ միջազգային տեղեկատվական ու վճարահաշվարկային համակարգերին և իր հաճախորդներին ծառայություններ է մատուցում «Բանկ-Հաճախորդ» համակարգով: Բանկն արդեն իսկ ստեղծել է իր կայքը, որտեղ ներկայացված է Բանկի մասին ամփոփ տեղեկատվություն:

Բանկի բոլոր տեղեկատվական և վճարահաշվարկային համակարգերում կիրառվում են տեխնոլոգիաների հուսալիության և անվտանգության ապահովման միջազգայնորեն ընդունված սկզբունքները:

2005 թվականի Բանկի հաջողությունները և ձեռքբերումները հնարավոր դարձան մեր պրոֆեսիոնալ և փորձառու անձնակազմի կազմավորման և Բանկի զարգացման գործին ամենայն լրջությամբ, համախմբվածությամբ, հոգատարությամբ մոտենալու և քրտնաջան աշխատանքի շնորհիվ:

Գալիք տարում մենք պատրաստվում ենք պահպանել աշխատանքի բարձր տեմպը և հետևողականորեն իրականացնել բոլոր ռազմավարական նպատակները և խնդիրները՝ ի նպաստ մեր շահառուների լավագույն արդյունքների ձևավորմանը:

Շնորհակալություն ենք հայտնում մեր բոլոր Հաճախորդներին և Գործընկերներին՝ Բանկի հանդեպ ցուցաբերած վստահության և աջակցության համար:

Լավագույն մաթթանքներով, փոխշահավետ համագործակցության պատրաստակամությամբ և հարգանքներով՝

Խորհրդի Նախագահ




Վարդան Սիրմաքես

ՆԱԾԱԽՈՐԴԻ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ

Մենք ծգում ենք հանախորդների հետ հասանելի
և զարգացնել կայուն և երկարակետ համագործակցություն





ՓՐԱՅՎԻԹ ԲԵՆՔԻՆԳԸ - ԲԻԶՆԵՍ-ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Որդեգրելով փրայվիթ բենքինգի բիզնես-փիլիսոփայությունը՝ Բանկը հրաժարվում է մասսայական սպասարկումից, հետևողականորեն ներդնում է փրայվիթ բենքինգի հիմնարար սկզբունքները և նպաստում դրա ձևավորմանն ու զարգացմանը Հայաստանում:

Փրայվիթ բենքինգը (private banking) նոր հասկացություն է Հայաստանի բանկային համակարգի համար թե՛ բանկերի և թե՛ հաճախորդների տեսանկյունից: Փրայվիթ բենքինգ հասկացությունը հիմնվում է հաճախորդի և ֆինանսական հաստատության միջև այնպիսի հարաբերությունների կառուցման վրա, որոնք բնութագրվում են հաճախորդին, այսպես կոչված՝ “tailor-made”, անհատական և փաթեթային բարձրակարգ ծառայությունների մատուցմամբ: Ի դեպ՝ փրայվիթ բենքինգը դա լոկ բարձրակարգ սպասարկում չէ, այլ հաճախորդների անհատական պահանջները բավարարելու բիզնես-փիլիսոփայություն, որն արտահայտվում է հաճախորդի խնդիրներին իբրև սեփական խնդիրների մոտեցմամբ և առավել օպտիմալ լուծումների առաջարկմամբ:

Փրայվիթ բենքինգի նպատակային խմբերն են ինչպես ձեռնարկատերերը և անհատները, այնպես էլ կայացած կորպորացիաները:

Բանկի բիզնես-փիլիսոփայության հիմնական դրույթները ներկայացվում են «Հաճախորդներ և գործընկերներ - Գործունեության հիմնաքար» բաժնում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկն իր գործունեությունը ծավալում է երկու հիմնական ուղղություններով՝ ավանդական բանկային ծառայություններ և ներդրումային գործունեություն: 2005 թվականի ընթացքում, գործունեության առաջին իսկ տարում, Բանկը ներդրել է իր գործունեության հիմնական ուղղություններին բնորոշ ծառայությունների մեծ մասը:

ԱՎԱՆԳԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կիրառելով փրայվիթ բենքինգին բնորոշ սպասարկման տեխնոլոգիաները, Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ունիվերսալ բանկային ծառայություններ՝ վարկավորումից և ավանդների ընդունումից մինչև վճարահաշվարկային ծառայություններ և առևտրի ֆինանսավորում:

Վճարահաշվարկային ծառայություններ

Հաշիվ ունենալը ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ում առաջին քայլն է Բանկի ծառայություններից օգտվելու հնարավորությունների ճանապարհին: Այն բույլ է տալիս ընտրել վճարման, ներդրման և ֆինանսավորման պահանջները բավարարող բազմաթիվ լուծումներ:

Ելնելով Բանկում գործող հաճախորդների սպասարկման քաղաքականությունից և «Ճանաչիր հաճախորդիդ» (Know Your Customer rules) սկզբունքներից, Բանկը ծառայություններ չի մատուցում Բանկում հաշիվ չունեցող կամ Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց:

Արտարժույթային և դրամային հաշիվների միջոցով Բանկի հաճախորդները կարող են իրականացնել վճարումներ և օգտվել ներդրումային գործիքներից:

Վճարումներ ՀՀ դրամով

Հանդիսանալով Հայաստանի միջբանկային համախառն էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակից, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը դրամային փոխանցումներն իրականացնում է հաճախորդի համար հնարավորինս կարճ ժամանակահատվածում և նվազագույն ծախսերով:

Միջազգային վճարումներ

Հաճախորդների միջազգային վճարումները հուսալի և բարեհաջող իրականացնելու նպատակով Բանկը 2005 թվականին սեղմ ժամկետներում անդամակցել է SWIFT միջազգային վճարումների համակարգին, գործընկերային հարաբերություններ է հաստատել մի շարք միջազգային հզոր ֆինանսական հաստատությունների հետ և բացել է հիմնական արժույթներով (USD, EUR, CHF, GBP, RUR) թղթակցային հաշիվներ եվրոպական այնպիսի հուսալի բանկերում, ինչպիսիք են՝ UBS AG, Raiffeisen Zentralbank Osterreich AG, Commerzbank AG, International Moscow Bank, Rietumu Banka:

Փոխարկումներ

Օգտագործելով իր թղթակից բանկերի ցանցը, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդներին և գործընկերներին առաջարկում է տեղական և միջազգային շուկաների մրցունակ փոխարժեքներ, ցուցաբերելով անհատական մոտեցում և փոխանակման օպերատիվություն:

Ավանդների ընդունում

Բանկը 2005 թվականի ընթացքում մշակել և առաջարկել է հաճախորդների ազատ միջոցների տեղաբաշխման պահանջները բավարարող լայն ներդրումային հնարավորություններով ավանդային ծրագիր, որը բույլ է տալիս ստանալ երաշխավորված եկամուտ և ընտրել ավանդներ՝ ըստ արտարժույթի տեսակի, մարման ժամանակահատվածի, տոկոսագումարների վճարման պարբերականության: Մասնավորապես, իրավաբանական անձանց ուշադրությանն են արժանի կարճաժամկետ (սկսած 7 օրից) ժամկետային ավանդները:

Ֆինանսավորում

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդներին առաջարկում է ֆինանսավորման ծառայություններ (վարկավորում, առևտրի ֆինանսավորում, երաշխիքներ) իրենց գործունեությունը զարգացնելու, ընդլայնելու և բազմազանեցնելու համար:

Վարկավորում

Արագ զարգացող բիզնես-միջավայրում հաջող մրցակցելու համար լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն է առաջանում: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդներին տրամադրում է վարկեր՝ հիմնական միջոցների ձեռքբերման, ինչպես նաև շրջանառու միջոցների համալրման համար:

Բանկը նախապատվություն է տալիս կայացած կորպորատիվ հաճախորդներին, որոնք ունեն կայուն գործող բիզնես, բարի համբավ՝ գործարար աշխարհում և բազմաձև աշխատանքային փորձ իրենց գործունեության բնագավառներում, ինչպես նաև հետաքրքրություն են ցուցաբերում ավանդական ծառայություններից բացի օգտվել նաև Բանկի կողմից առաջարկվող ներդրումային գործիքներից:

Բանկը վարկավորման գործընթացն իրականացնում է բիզնես-վարկավորման բնագավառում՝ վարկավորելով իրավաբանական անձանց և բիզնեսի ձեռքբերման կամ ընդլայնման նպատակ ունեցող ֆիզիկական անձանց:

Վարկավորման քաղաքականությունից ելնելով՝ Բանկն ուշադրություն է դարձնում իր վարկային պորտֆելի դիվերսիֆիկացմանը, ինչի արդյունքում Բանկը 2005 թվականի ընթացքում վարկեր է տրամադրել տնտեսության հետևյալ ոլորտներում.

- էներգետիկա,
- հանքարդյունաբերություն,
- քեթև և սննդի արդյունաբերություն,
- շինարարություն,
- հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ:

Բանկը շարունակելու է իր վարկավորման գործընթացը արդեն իսկ նշված բնագավառներում՝ ուսումնասիրելով նաև տնտեսության այլ ճյուղերի և հատվածների զարգացման միտումները:

Բանկը նպատակ ունի հետագայում վարկավորել տնտեսության այն ոլորտները, որտեղ արտադրանքն ընդունում է վերջնական տեսք և սպառվում է ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին շուկաներում:

Իր ռազմավարական նպատակներից ելնելով՝ Բանկն իր վարկային պորտֆելը ձևավորում է այնպիսի վարկերից, որոնք հետագայում կարող են վաճառվել արտասահմանյան և հայրենական ներդրողներին՝ հանդիսանալով այլընտրանքային ներդրումային գործիքներ:

Բանկը ներմուծում է վարկավորման գործընթացի նոր գործիքներ, մասնավորապես գործընկեր-բանկերի հետ համատեղ սինդիկացված վարկերի տրամադրում, ներդրողների հետ համատեղ համաֆինանսավորման մեխանիզմների մշակում, իրականացում և այլն:

Առևտրի ֆինանսավորում և երաշխիքներ

Շնորհիվ փորձառու անձնակազմի, գործընկեր-բանկերի ընդգրկում ցանցի և տեխնոլոգիաների ինացություն, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր հաճախորդների համար հուսալի միջնորդ է միջազգային առևտրում գործունեություն ծավալելիս: Այս ոլորտում ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի կողմից առաջարկվող ակրեդիտիվները, ինկաստները, երաշխիքները կօգնեն և՛ գնորդներին, և՛ վաճառողներին նվազեցնել միջազգային առևտրային գործարքներում առկա իրենց ռիսկերը:

ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բանկի առաքելության հիմնական ռազմավարական ուղղություններից է ներդրումային բանկային գործունեությունը: Այդ իսկ պատճառով ստեղծման օրվանից Բանկի գործողություններն ուղղված են այդ ռազմավարական ուղղությունը ձևավորելուն և զարգացնելուն: Դեռևս մինչև ներդրումային գործառնությունների սկիզբը, Բանկում մշակվեցին համապատասխան տեխնոլոգիաներ, ներդրումային որոշումների կայացման մեխանիզմներ, ներդրումային գործունեության հետ կապված ռիսկերի կառավարման և գույքի համակարգեր, ձեռք բերվեցին նախնական պայմանավորվածություններ գործընկերների հետ:

Բանկային գործունեության լիցենզիայի ստացման պահից Բանկը սկսել է ակտիվորեն իրականացնել ՀՀ պետական արժեթղթերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում և արդեն իսկ ձևավորել է ՀՀ պետական պարտատոմսերի սեփական պորտֆել: Այդ ակտիվության շնորհիվ է, որ 2005թ.-ի սեպտեմբերին Բանկը դարձավ ՀՀ պետական պարտքի կառավարման գծով դիլեր՝ հնարավորություն ստանալով ուղղակիորեն մասնակցել ՀՀ պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման աճուրդներին:

Բանկն ակտիվորեն մասնակցում է հայկական ֆինանսական շուկայի զարգացմանն ուղղված բոլոր նախաձեռնություններին: Այդ իսկ պատճառով, երբ նոյեմբերին Հայաստանի ֆոնդային բորսայում սկսեցին իրականացվել արտարժույթի առք ու վաճառքի սակարկություններ, Բանկը սկսեց մասնակցել այդ սակարկություններին:

Գործունեության սկզբից Բանկը հանդես է գալիս նաև միջբանկային անկանխիկ արտարժույթային շուկայում, իրականացնելով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առք ու վաճառքի գործառնություններ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կիրառում է ածանցյալ գործիքներ, օր.՝ սվոպ: Այդ աշխատանքներն ակտիվացան սեպտեմբերին՝ SWIFT միջազգային համակարգին միանալուց հետո: Իսկ հոկտեմբերից այլ բանկերի և հաճախորդների հետ փոխարկային գործառնություններ են իրականացվում տեղական և միջազգային շուկաներում:

2005թ.-ի հուլիսին ձեռք բերելով Bloomberg Professional և Reuters Wealth Manager՝ արժեթղթերի, փողի և արտարժույթի շուկաներում գործելու համար նախատեսված տեղեկատվական համակարգերը, Բանկը սկսեց իրականացնել ներդրումներ ԱՄՆ-ի, Եվրամիության և Ռուսաստանի Դաշնության պետական պարտատոմսերում: Տարեվերջին Բանկը Հայաստանի բանկային համակարգում գրադեցնում էր առաջին տեղը այլ երկրների արժեթղթերում ներդրումների ծավալով՝ կազմելով ամբողջ բանկային համակարգի նման ներդրումների գրեթե 40%:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում, ինչպես նաև ՀՀ տարածքում գործող այլ բանկերին կարճաժամկետ և միջնաժամկետ դեպոզիտների տեսքով ներգրավման և տեղաբաշխման գործիքներ տրամադրելով:

Ակտիվների և պասիվների (իրացվելիության) կառավարման մակարդակի բարձրացման նպատակով Բանկն արտասահմանյան գործընկեր-բանկերի հետ կնքել է գլխավոր համաձայնագրեր: Այդ համաձայնագրերի հիման վրա Բանկը 2005 թվականին արտասահմանյան բանկերի հետ սկսեց իրականացնել ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ, օգտվել միջբանկային վարկերից և պահառուական ծառայություններից, ինչը նպաստեց միջազգային ֆինանսական շուկաներում Բանկի կողմից իրականացվող գործարքների եկամտաբերության բարձրացմանը, ակտիվների և պասիվների կառավարման մակարդակի բարելավմանը:

Բանկն առաջիկայում իր հաճախորդներին առաջարկելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում պարտքային գործիքների և այլ արժեթղթերում ներդրումների իրականացման հետ կապված ծառայությունների լայն ընտրանի, մասնավորապես արժեթղթերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, արտասահմանյան արժեթղթեր ձեռք բերելու համար լրացուցիչ ֆինանսավորման տրամադրում՝ ձեռքբերվող արժեթղթերի գրավադրմամբ (մարժինալ վարկավորում), ինչպես նաև կատարելու է պահառուական գործառնություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար: Բանկն արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռք բերել գործընկեր-բանկերի հետ՝ հաճախորդներին, Բանկի միջոցով, մատուցել նաև բրոքերային և պահառուական ծառայություններ, որը հնարավոր կլինի իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալուց հետո: Հաճախորդների պահանջները ապագայում լավագույնս հասկանալու և բավարարելու նպատակով, Բանկը 2005 թվականին ձևավորել է արտասահմանյան տարրեր տեսակի արժեթղթերից կազմված պորտֆել:

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձնում ֆինանսական շուկայում բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական, բրոքերային ընկերությունների հետ համագործակցության ծավալմանը, և դրանց համար միջնորդ օղակ հանդիսանալու հնարավորություններին՝ մատուցելով ծառայություններ ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում, հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարել տարբեր ֆինանսական գործիքներում: Հատկանշական է, որ Բանկը համագործակցում է Հայաստանի բոլոր բանկերի հետ, նրանց հետ իրականացնելով սվոփ, ռեպո և հակադարձ ռեպո գործառնություններ, տրամադրելով և ստանալով միջբանկային վարկեր, իրականացնելով այլ ներդրումային գործառնություններ:

Բանկի ներդրումային գործունեությանը վերաբերող ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է «Ֆինանսական արդյունքներ» բաժնում:

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԿԱՆ

Լավագույն արդյունքների հասնելու նպատակով՝ մեր փորձառու
և առաջադեմ մասնագետները մշտադեմ բարձրացնում են իրենց
մասնագիտական դասրասվածությունը և փոխանակվում են
իրենց գիտելիքներով և փորձով






ԿՈՐԴՈՐՄՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բանկի ստեղծման պահից Հիմնադիրը և Խորհուրդը կարևորել են արդյունավետ կորպորատիվ կառավարման համակարգի ստեղծումը Բանկում: Բանկն իր կորպորատիվ կառավարման համակարգը կառուցել է «սահմանափակումների և հակակշիռների» (checks and balances) միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման վրա, որն արտահայտվում է իր գործունեության ընթացքում հետևյալ հիմնական դրույթների անվերապահորեն կիրառմամբ.

- **Միազորությունների և պարտականությունների հարակցաբանում:** Բանկի բոլոր աշխատակիցները, ղեկավարները և կոլեգիալ մարմիններն ունեն իրենց լիազորությունները և պարտականությունները սահմանող ներքին ակտեր:
- **Բաժնեիրիտը, Խորհրդի, Գործադիր մարմնի, Ներքին և Արտաքին ստղիտորների միջև արդյունավետ համագործակցություն, ինչն ամրագրված է կորպորատիվ վարքագծի կանոններում:** Բանկի ներքին և արտաքին ստղիտորների կողմից արված առաջարկությունները համակողմանիորեն քննարկվում են՝ կառավարման համակարգը կատարելագործելու նպատակով:
- **Հուսալի ներքին հսկողության համակարգի ստեղծում, որը կապահովի ռիսկերի անընդհատ և շարունակական մոնիթորինգ:** Բանկի ներքին հսկողության համակարգն ունի երկու մակարդակ՝ ինքնահսկման և վերահսկման: Յուրաքանչյուր ստորաբաժանում և աշխատակից, ելնելով իր լիազորություններից և պարտականություններից՝ ինքնուրույն է հսկում իր կողմից իրականացվող գործառնությունների կատարման ճշտությունը: Այդ գործառնությունների իրականացման ճշտության և կանոնակարգիչ ակտերին համապատասխանության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Բանկի ներքին աուդիտի և ռիսկերի կառավարման ստորաբաժանումների կողմից: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումն ամենօրյա հսկողություն է իրականացնում ֆինանսական ռիսկեր պարունակող գործառնությունների նկատմամբ: Միևնույն ժամանակ, Խորհրդի կողմից հաստատված տարեկան ծրագրի համաձայն Բանկի Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է Բանկի գործունեության տարբեր ոլորտների ստուգում: Համակարգի արդյունավետությունն ապահովվում է ստորաբաժանումների միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատման և փաստաթղթավորման ստեղծման, ինչպես նաև համադրումների կիրառման շնորհիվ:
- **Առավել ռիսկային ոլորտներում որոշումների կայացման կոլեգիալություն:** Բանկում գործում են որոշումների կայացման և խորհրդակցական կոլեգիալ մարմիններ՝ Ակտիվների և պասիվների կառավարման, Վարկային և Ներդրումային կոմիտեներ և Բյուջետային հանձնաժողով:
- **Գործարքների և ռիսկային գործողությունների կապարում առնվազն երկու անձի մասնակցությամբ:** Բանկում գործառնությունների իրականացմանը մասնակցում են առնվազն երկու աշխատակից, իսկ առավել ռիսկային գործառնություններում՝ նույնիսկ երեքը: Այդ ամենն ամրագրված է համապատասխան ներքին ակտերով:
- **Հաշվետվողական և տեղեկատվական կաշիտ համակարգի ստեղծում:** Բանկում գործում է հաշվետվողականության համակարգ, որի նպատակն է Բանկի գործունեության հետ առնչվող շահագրգիռ և իրավասու կողմերին ապահովել համապարփակ տեղեկատվությամբ՝ ռիսկերը կառավարելու և սահմանափակելու, որոշումներ կայացնելու, հսկողություն իրականացնելու նպատակով:
- **Կորպորատիվ վարքագծի արժեքների պահպանում:** Բանկում մշակվել և Խորհրդի կողմից հաստատվել է «Կորպորատիվ վարքագծի կանոններ» փաստաթուղթը, որը սահմանում է այն արժեքները, որոնցով պետք է առաջնորդվի Բանկն իր հաճախորդների, գործընկերների, պետական մարմինների, աշխատակիցների հետ հարաբերություններում:
- **Հարակց շահերի վրա ռազմավարական ծրագրի ստեղծում:** Յուրաքանչյուր տարվա համար Խորհրդի կողմից հաստատվում է Բանկի ռազմավարական ծրագիր, որը սահմանում է Բանկի կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակները, նպատակային ֆինանսական ցուցանիշները, ծախսերը, եկամուտները և միջոցառումները:



Բանկի կորպորատիվ կառավարման համակարգը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.




ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2005թ.-ի ընթացքում Բանկը հավաքագրել է իր անձնակազմի հիմնական և կարևոր մասը՝ կորիզը: Բանկի առանցքային աշխատակիցները Հայաստանի ֆինանսարանկային համակարգում ունեն բազմամյա աշխատանքային փորձ: Բանկի անձնակազմն առանձնանում է ոչ միայն իր փորձառությանը, այլ նաև մասնագիտական գիտելիքների հսկայական պաշարով և անձնական հատկանիշներով:

Անձնակազմի կառավարման քաղաքականությունն իրականացնելիս Բանկն առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով, որոնք ամրագրված են Խորհրդի կողմից հաստատված ներքին ակտերում.

- Բանկն իր աշխատակիցների հետ փոխհարաբերությունները կառուցում է երկարատև համագործակցության և փոխադարձ հարգանքի, ինչպես նաև փոխադարձ պարտականությունների անշեղորեն կատարման սկզբունքների հիման վրա:
- Բանկն իր աշխատակցի նկատմամբ թույլ չի տալիս որևէ քաղաքական, սեռային, ազգային և այլ խտրականություն՝ աշխատանքի ընդունման, աշխատավարձի վճարման, ծառայողական առաջխաղացման ժամանակ:
- Բանկն իր աշխատակցի համար ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմանները մասնագիտական աճի, սոցիալական բարեկեցության ապահովման համար:
- Բանկը մասնագիտական գիտելիքների և փորձի հետ զուգահեռ կարևորում է աշխատակիցների անձնական հատկանիշները:
- Բանկը ձգտում է ապահովել աշխատակիցների փոխադարձ փոխարինելիությունը:
- Բանկը կարևորում է յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքը:

Բանկի կառուցվածքը.



ՇՐՋԱՆԱՅԱՇՈՒԹՅՈՒՆ

Կիրառելով որոշումների կայացման կոլեգիալության սկզբունքը՝ մենք ադահովում ենք վերջիններիս կայացման արդյունավետությունը՝ օգտագործելով ռիսկերը, դրանք դարձնելով վերահսկելի և կանխատեսելի





ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բանկի կառավարման մարմինները կարևորում են ռիսկերի արդյունավետ կառավարումը և դրանց անընդհատության ապահովումը:

Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության և գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ, հիմնված՝ ռիսկերի գնահատման և զսպման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների վրա: Մասնավորապես, Բանկում ստեղծվել է **ռիսկերի կառավարման ստորաբաժանում**, որն ամենօրյա հսկողություն է իրականացնում Բանկի գործառնությունների նկատմամբ՝ ստուգելով առավել ռիսկային գործարքները և հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտին: Միաժամանակ Բանկում գործում է **Ներքին աուդիտի ստորաբաժանում**, որը վերահսկում է Բանկի Խորհրդի և Գործադիր մարմնի կողմից ընդունված ներքին ակտերի (քաղաքականություններ, կանոնակարգեր, կարգեր և այլն) Բանկի գործունեությանը համապատասխանելու գործունք, ինչպես նաև ստուգումների միջոցով քննադատում է ռիսկերը: Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է ոչ միայն ռիսկերի կառավարման և ներքին աուդիտի ստորաբաժանումների միջոցով, այլ նաև որոշում կայացնող բոլոր մակարդակներում:

Բանկի Խորհուրդ: Բանկի Խորհուրդը սահմանում է Բանկի վարկային և ներդրումային գործունեությունների նորմատիվներ, սահմանաչափեր, ուղեցիղներ, վարկառուների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ, ներդրումների իրականացման ուղղություններ, գործընկերների ընտրության չափանիշներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային և շուկայական ռիսկերը: Բանկի մնացած բոլոր մարմիններն իրենց գործառնություններն իրականացնում են՝ ելնելով Խորհրդի կողմից սահմանված պահանջներից:

Որոշումներ կայացնող կոլեգիալ մարմիններ: Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտեն կոչված է կառավարել իրացվելիության ռիսկը: Այն իր հերթին, այլ գործառնությունների հետ մեկտեղ, կիրառում է Բանկի Խորհրդի և ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված ավելի խիստ նորմատիվներ և սահմանափակումներ, որոնք հիմնականում ունեն նախազգուշացման բնույթ: Ակտիվների և պասիվների կառավարման կոմիտեի գործառնություններից է նաև Բանկի ռազմավարությանը նախատեսված միջոցառումների իրականացման պարբերական մոնիտորինգ: **Վարկային կոմիտե**ն առաջնորդվելով Խորհրդի կողմից հաստատված «Վարկային քաղաքականությանը», իր հերթին ընդունում է վարկային գործունեությունը կանոնակարգող ներքին ակտեր և օպերատիվ կառավարում է վարկային ռիսկը՝ իր լիազորությունների շրջանակում որոշումներ կայացնելով վարկերի տրամադրման կամ մերժման վերաբերյալ: **Ներդրումային կոմիտե**ն պարտականությունների մեջ մտնում է ֆինանսական շուկաներում առաջացող շուկայական ռիսկի գնահատումը և համապատասխան ներդրումային լուծումների մշակումն ու առաջարկումը: Բանկի կարիքների համար ապրանքների և հիմնական միջոցների ձեռքբերման բնագավառում շահերի բախման և չարաշահումների ռիսկերը քննադատելու նպատակով, Բանկում գործում է **Բյուջետային հանձնաժողով**, որը որոշումներ է կայացնում Բանկի կողմից խոշոր ձեռքբերումների վերաբերյալ:

Բանկի Գործադիր տնօրեն: Գործադիր տնօրենը, որպես Բանկի գործադիր մարմնի ղեկավար, ուղղակի կամ անուղղակի կառավարում է Բանկի բոլոր ռիսկերը՝ ղեկավարելով Բանկում գործող կոլեգիալ մարմինները, անհրաժեշտության դեպքում ստեղծելով աշխատանքային խմբեր, կազմակերպելով խորհրդակցություններ, իր լիազորությունների շրջանակում որոշումներ կայացնելով Բանկի ընթացիկ գործունեության վերաբերյալ:

Ստորաբաժանումներ: Բանկի յուրաքանչյուր ստորաբաժանում և աշխատակից անշեղորեն հետևում է Բանկում գործող ներքին ակտերին, որոնք կանոնակարգում են Բանկի գործունեության բոլոր որոշումները: Բանկի գործառնական ռիսկերը սահմանափակելու նպատակով Բանկում բոլոր գործառնությունները կատարվում են առնվազն երկու անձի (աշխատակցի) մասնակցությամբ: Բանկում գործում են աշխատակիցների իրավասությունները և պարտականությունները հստակ տարանջատող ներքին ակտեր, ինչպես նաև «խաչվող» հաշվետվությունների համակարգ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Փոխշահավետ արդյունքների հասնելու նպատակով՝ մենք արժեքավորում ենք հաճախորդների և գործընկերների հետ երկարատև ու շարունակական համագործակցությունը



ՀԱՆՄԱՍՈՐԳՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ - ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

Բանկն արժեքավորում է հաճախորդների և գործընկերների հետ երկարատև ու շարունակական համագործակցությունը և իր հարաբերությունները կառուցում է փոխաշահավետության հիմքերի վրա:

Բանկի հարաբերությունները հաճախորդների և գործընկերների հետ կառուցվում են օրինակաչափային, բարեխղճության, ազնվության, փոխադարձ վստահության և հարգանքի, հաճախորդի շահերի առաջնայնության, պարտավորությունների անխախտելիության սկզբունքների հիման վրա:

2005 թվականի ընթացքում Բանկը գտնվում էր կազմավորման փուլում և իր առջև նպատակ չէր դրել ակտիվ գործողություններ ծավալել հաճախորդների ներգրավման ուղղությամբ:

Հաճախորդների սպասարկման ոլորտում Բանկը ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին ակտերով, հաճախորդների սպասարկման քաղաքականությամբ, ինչպես նաև փրայվիթ բենքինգի բիզնես-փիլիսոփայությամբ, որը հիմնվում է միջազգային պրակտիկայում ընդունված և կիրառվող հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- Հաճախորդին վերաբերող տեղեկատվության զաղտնիության ապահովում
- Սպասարկման բարձր որակ
- Բանկի և հաճախորդի միջև իրավահավասար հարաբերությունների ձևավորում
- Համապատասխան քաղաքականության մշակում և ներդրում, որը հնարավորություն կտա հաճախորդին մատուցել միջազգային բանկային պրակտիկայում ընդունված և նրա անհատական պահանջները բավարարող անհատականացված, այսպես կոչված՝ “tailor made” ծառայություններ
- Հաճախորդի հետ հարաբերությունների կառուցում անհատական մեներջերի միջոցով
- Հաճախորդի կարիքների բացահայտում՝ արդյունավետ լուծումներ առաջարկելու նպատակով
- Հաճախորդի միջոցների կառավարման այնպիսի մոտեցում, որը թույլ է տալիս բազմազանեցնելով միջոցները նվազեցնել ռիսկերը և միաժամանակ ապահովել հնարավորինս կայուն եկամտաբերություն

Ելնելով իր բիզնես-փիլիսոփայությունից, հաճախորդների սպասարկման քաղաքականությունից և «Ճանաչիր հաճախորդիդ» սկզբունքներից՝ Բանկը չի իրականացնում մանրամասն բանկային ծառայություններ մատուցող բանկերին բնորոշ հաճախորդների լայն զանգվածների սպասարկում, ինչպես նաև չի մատուցում ծառայություններ Բանկում հաշիվ չունեցող կամ Բանկի հաճախորդ չհանդիսացող անձանց: Բանկը ձգտում է հարաբերություններ հաստատել հետևյալ չափանիշներին համապատասխանող հաճախորդների և գործընկերների հետ.

- Կորպորատիվ հաճախորդներ, որոնք ունեն կայուն գործող միջին և խոշոր ծավալի բիզնես
- Ունենոր անհատներ, որոնք ունեն իրենց ունեցվածքը արդյունավետ կառավարելու խնդիր, այլընտրանքային ակտիվներում ներդրումներ իրականացնելու ցանկություն
- Բանկ և ոչ բանկ ֆինանսական միջնորդ կազմակերպություններ

Բանկի յուրաքանչյուր աշխատակից հասկանում և ընդունում է Բանկի առաքելությունը և հաճախորդների ու գործընկերների հետ հարաբերություններում պարտավորվում է պահպանել Բանկի կորպորատիվ վարքագծի կանոններով սահմանված հետևյալ դրույթները.

- Բանկի աշխատակիցը գործադրում է իր բոլոր ջանքերը հաճախորդի և գործընկերոջ համար հնարավոր ռիսկերի նվազեցման ուղղությամբ:
- Բանկի աշխատակիցն ուշադիր ուսումնասիրում է արված առաջարկությունները և ժամանակին արձագանքում է Բանկին հասցեագրված դիտողություններին:
- Բանկի աշխատակիցը չի տարածում հաճախորդների և գործընկերների, նրանց գործարքների, հաշիվների և ներդրումների մասին տեղեկությունները, ինչպես նաև այլ տվյալներ, եթե նման տեղեկատվության տրամադրումը նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:
- Բանկի աշխատակիցն իրավասու չէ կատարել հետազոտություններ և հաճախորդին կամ գործընկերոջը Բանկի անունից եզրակացություն տրամադրել, եթե դա կապված չէ իր ծառայողական պարտականությունների կատարման հետ:

Քանի որ Բանկը չի իրականացնում մասսայական սպասարկում, նրա մարկետինգային քաղաքականությունն ուղղված չէ լայնածավալ գովազդային արշավների և միջոցառումների իրականացմանը, այլ ենթադրում է նպատակային խմբերի հետ արդյունավետ և անհատական մոտեցմամբ աշխատանքների իրականացում, կիրառելով այսպես կոչված՝ «Անհատական մարկետինգ»-ի (direct marketing) ժամանակակից և առաջադեմ տեխնոլոգիաները:

ԿՈՆՖԻԴԵՆՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՆՆ օրենսդրությամբ և հավասարիմ մնալով փրայվիթ բենքինգի սկզբունքներին՝ մենք ղախողանում ենք մեր հաճախորդների վերաբերյալ շեղեկասվության անձեռնմխելիությունը



ARMSWISS BANK
Private & Investment Banking



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

2005 թվականի ընթացքում Բանկը ծավալուն աշխատանքներ է իրականացրել տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի նախագծման և ստեղծման ուղղությամբ: Արդյունքում, ձևավորվեց Բանկի բոլոր օղակների կայուն, անվտանգ ու շարունակական աշխատանքը ապահովող և միջազգայնորեն ընդունված տեղեկատվական տեխնոլոգիաների ստանդարտներին համապատասխանող համակարգչային, ծրագրային և տեխնիկական ենթակառուցվածք, որն իր մեջ ներառում է.

- Բանկային գործունեության ավտոմատացված ծրագրային համակարգ (LSBANK 5.0)
- Վճարահաշվարկային համակարգեր (Bankmail, SWIFT)
- Առևտրային համակարգեր (Bloomberg Professional, Reuters Wealth Manager)
- Վեբ համակարգեր (վեբ սերվեր, ինտերնետային կայք)
- «Բանկ-Հաճախորդ» համակարգ
- ՀՀ միջբանկային ցանց (CBANet)
- Բանկի բնականոն գործունեությունն ապահովող այլ տեղեկատվական համակարգեր (Fire wall, պահուստավորման, հակավիրուսային, ներքին տեղեկատվական հոսքերի կառավարման և փաստաթղթաշրջանառության համակարգեր)


Հաշվի առնելով տեղեկատվության և տեղեկատվական ենթակառուցվածքի կարևորությունը Բանկի բնականոն գործունեության համար, ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցառումները համակարգերի անվտանգության ապահովման և ռիսկերի նվազեցման ուղղությամբ:

Արտաքին վտանգներից պաշտպանվելու համար գործարկվում է սահմանագատիչ սերվեր (Fire wall), հակավիրուսային համակարգ, «Բանկ-Հաճախորդ» համակարգի տեղեկատվության կողավորման VeriSign 128 Bit SSL սերտիֆիկատ: Ներքին ռիսկերը նվազեցնելու նպատակով հնարավորինս սահմանափակվում է համակարգերն օգտագործողների իրավասությունները, ինչպես նաև համակարգերի ու սերվերների ֆիզիկական հասանելիությունը: Գործարքների իրականացման և/կամ համակարգերում իրավասությունների տրամադրման, փոփոխության և դադարեցման համար կիրառվում է առնվազն երկու անձի մասնակցության սկզբունքը: Գործունեության անընդհատությունն ապահովելու նպատակով վեբը նշված համակարգերում առկա տեղեկատվությունն ամեն օր պահուստավորվում է և, անհրաժեշտության դեպքում, կարող է շատ արագ վերականգնվել: Բոլոր հույժ կարևոր համակարգերը, այդ թվում՝ բոլոր կապուլիններն ունեն պահուստային տարբերակներ և ապահովված են էլեկտրաէներգիայի անխափան սնուցման սարքերով:

ՇԻՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Մենք հոգում ենք մեր համրավի մասին, այդ իսկ դասնառով
բարձր ենք գնահատում վստահությունը և գործնական էթիկան





Grant Thornton Amyot

Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի անդամ
Հավատարմագրված հաշվապահներ
Կառավարման և հարկային խորհրդատուներ
Իրավախորհրդատուներ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐ

ԱՆԿԱՑ ԱՌԻԳԻՏՈՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար, կցված 26-ից 52 էջերում, պատասխանատվությունը կրում է Ընկերության ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Ընկերության ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտներին համապատասխան:

25

ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ ԱՄԻՕ ՍՊՈ
Երևան, 10 մարտի, 2006թ.



Grant Thornton Amyot

Վաղարշ Վաղարշյան փող. 8/1
Երևան 375012, ՀՀ
Հեռ. (374 10) 260 964 / 276 544
Ֆաքս. (374 10) 260 976
Էլ-փոստ: gta@gta.am
URL: www.gta.am

Պետական գրանցման վկայական թիվ 01Ա035877
Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱՅԳ 011 տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2005թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
հազ. ՀՀ դրամ

2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող 3ամիսների համար
հազ. ՀՀ դրամ

	Ծանոթ.	2005թ. (ստուգված)	2004թ. (ստուգված)
Տոկոսային եկամուտներ	4	258,802	-
Տոկոսային ծախսեր	4	(44,686)	-
Զուտ տոկոսային եկամուտներ		214,116	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		2,141	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(4,396)	(80)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		(2,255)	(80)
Արտարժույթային գործարքներից և փոխարկումից զուտ եկամուտ/(ծախս)		(1,599)	315
Ներդրումային արժեթղթերից զուտ եկամուտ		7,476	-
Այլ գործառնական եկամուտ	5	71	84
Մասհանումներ հնարավոր կորուստների պահուստներին	6	(25,924)	-
Այլ գործառնական ծախսեր	7	(206,253)	(10,798)
Վնաս մինչև հարկումը		(14,368)	(10,479)
Շահութահարկի գծով փոխհատուցում	18	3,329	-
Տարվա վնաս		(11,039)	(10,479)

26

30-ից 52 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հաշվապահական հաշվեկշիռ

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
հազ. ՀՀ դրամ

	Ծանոթ.	2005թ. (ստուգված)	2004թ. (ստուգված)
ԱԿՏԻՎՆԵՐ			
Մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	8	330,100	49,610
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9	403,078	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	10	2,351,717	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	11	2,659,258	-
Հիմնական միջոցներ	12	47,101	40,655
Ոչ նյութական ակտիվներ	13	27,436	145
Հետաձգված հարկային ակտիվ	18	3,227	-
Այլ ակտիվներ	14	10,175	19,440
Ընդամենը ակտիվներ		5,832,092	109,850
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	1,932,376	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	16	911,911	-
Այլ պարտավորություններ		8,914	329
Ընդամենը պարտավորություններ		2,853,201	329
Բաժնետիրական կապիտալ	17	3,000,000	120,000
Կուտակված վնաս		(21,518)	(10,479)
Այլ պահուստներ		409	-
Ընդամենը կապիտալ		2,978,891	109,521
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		5,832,092	109,850

30-ից 52-րդ էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվառվությունների քաղկացուցիչ մասը:

Ֆինանսական հաշվառվությունները հաստատվել են Բանկի ղեկավարության կողմից 2006թ. մարտի 10-ին և ստորագրվել են Բանկի Գլխավոր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2005թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
հազ. ՀՀ դրամ

2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող 3 ամիսների համար
հազ. ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ներդրում- ների գծով վերագնա- հատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 7 հոկտեմբերի 2004թ. դրությամբ	-	-	-	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	120,000	-	-	120,000
Հաշվետու տարվա վնաս	-	-	(10,479)	(10,479)
Մնացորդը 31 դեկտեմբերի 2004թ. դրությամբ (ստուգված)	120,000	-	(10,479)	109,521
Բաժնետիրական կապիտալի ավելացում	2,880,000	-	-	2,880,000
Հաշվետու տարվա վնաս	-	-	(11,039)	(11,039)
Իրական արժեքի ճշգրտումից զուտ օգուտ	-	511	-	511
Հետաձգված հարկի ազդեցությունը	-	(102)	-	(102)
Մնացորդը 31 դեկտեմբերի 2005թ. դրությամբ (ստուգված)	3,000,000	409	(21,518)	2,978,891

Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2005թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
հազ. ՀՀ դրամ

2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող 3 ամիսների համար
հազ. ՀՀ դրամ

	2005թ. (ստուգված)	2004թ. (ստուգված)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված տոկոսներ	229,406	-
Վճարված տոկոսներ	(32,670)	-
Վճարված զուտ կոմիսիոն գումարներ	(2,255)	(80)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(100,861)	(7,469)
Չուր դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	93,620	(7,549)
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Վարկեր և ավանդներ բանկերում	(315,445)	-
Հաճախորդներին տրված վարկեր	(2,359,208)	-
Վաճառքի համար մատչելի ներդրումների ավելացում	(2,631,402)	-
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Բանկերից և ֆինանսական կազմակերպություններից ավանդներ	814,881	-
Հաճախորդներից ավանդներ	911,787	-
Այլ հոսքեր	(81,197)	(21,506)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(3,566,964)	(29,055)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների առք	(17,294)	(41,190)
Ոչ նյութական ակտիվների առք	(28,575)	(145)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(45,869)	(41,335)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկեր բանկերից և ֆինանսական կազմակերպություններից	1,109,381	-
Բաժնետիրական կապիտալի բողարկում	2,880,000	120,000
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	3,989,381	120,000
Արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(6,496)	-
Գրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	370,052	49,610
Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	49,610	-
Գրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջի դրությամբ (տես ծանոթ. 8)	419,662	49,610

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հիմնական գործունեությունը

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 7 հոկտեմբերի 2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 84 արտոնագրային համարով: Բանկը բանկային գործունեության լիցենզիա ստացել է ՀՀ ԿԲ Խորհրդի 25.02.2005թ.-ի թիվ 74 Ա որոշմամբ: Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումը և ավանդների ընդունումն է, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 375010, ք. Երևան, Խանջյան 13/2:

Բանկի աշխատողների միջին թվաքանակը 2005թ. ընթացքում կազմել է 37 մարդ (2004թ.՝ 12 մարդ):

2. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին:

Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն բողնել Բանկի ապագա գործունեության վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում որևէ ճշգրտումներ, որոնք կարող են առաջանալ նշված անորոշությունների հետագայում որոշակի դառնալու արդյունքում: Նման ճշգրտումները, եթե այդպիսիք կլինեն, կարտացոլվեն Բանկի ֆինանսական հաշվետվություններում այն ժամանակաշրջանում, երբ այդ ճշգրտումները ի հայտ կգան և դրանք հնարավոր կլինի գնահատել:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների (ՖՀՆՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Քանի որ Բանկը գրանցվել է 2004թ. հոկտեմբերի 7-ին՝ Բանկի առաջին հրապարակվող հաշվետվությունները և Բանկի ֆինանսական գործունեության արդյունքները ներառում են 2004թ. հոկտեմբերի 7-ից մինչև 2004թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանը: Հետևաբար, սկզբնական մնացորդները համադրելի չեն:

Հաշվապահական հաշվառման իր գրանցումները Բանկը վարում է Հայաստանի Հանրապետության դրամով (այսուհետ՝ ՀՀ դրամ) և, կարգավորող մարմիններին ներկայացնելու նպատակով պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և Հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՆՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է տնօրեններից կատարել այնպիսի գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում ներկայացված գումարների վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում: Մույն ֆինանսական հաշվետվությունների գծով առավել նշանակալի գնահատումները վերաբերում են հնարավոր կորուստների պահուստին, մաշվածությանը և ամորտիզացիային և այլ պահուստներին, որոնք բացահայտված են Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխան ծանոթագրություններում: Գնահատումները հիմնված են այն տեղեկատվության վրա, որը առկա է ֆինանսական հաշվետվությունների ներկայացման օրվա դրությամբ: Հետևաբար, փաստացի արդյունքները կարող են տարբերվել այս գնահատումներից:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Չախսատող վարկերի և փոխառությունների գծով, երբ դրանց մաքր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում, տոկոսային եկամուտը չի ճանաչվում: Ոչ տոկոսային ծախսերը ճանաչվում են գործարքների կատարման պահին:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև այլ հիմնական եկամտային և ծախսային հոդվածները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլվում են այն ժամանակ, երբ դրանց գծով գործառնությունները փաստացի կատարվում են:

Արտարժույթային գործառնություններ

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով՝ կիրառելով գործարքի օրվա ՀՀ ԿԲ կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են՝ կիրառելով ՀՀ ԿԲ կողմից հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքը, որը 2005թ-ի դեկտեմբերի 31-ին կազմել է 450.19 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2004թ. 485.84 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց): Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամական ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության արտարժույթային գործարքներից և փոխարկումից զուտ եկամուտ հոդվածում:

Հարկեր

Շահույթի կամ վնասի գծով հաշվետու ժամանակաշրջանի շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համաձայն: Հետաձգված հարկերը, եթե առկա են այդպիսիք, առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ակտիվի կամ պարտավորության հարկային բազան դա գումար է, որը հարկային նպատակներով վերագրվում է այդ ակտիվին կամ պարտավորությանը:

Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասհանումները կատարվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, երբ Բանկը՝

- ունի ճանաչված ընթացիկ հարկային ակտիվների և պարտավորությունների գումարների հաշվանցելու իրավաբանորեն անրագրված իրավունք;
- մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ;
- հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

ՀՀ-ում բանկերը իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Այլ գործառնական ծախսեր» ծանոթագրությունում:

Գրանական միջոցներ և դրանց համարժեքներ

Գրանական հոսքերի մասին հաշվետվության առումով դրանական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են ՀՀ ԿԲ-ում պահվող միջոցներից և այլ բանկերում ընթացիկ հաշիվներից (բացառությամբ այն գումարների, որոնց օգտագործման հնարավորությունը սահմանափակ է):

Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը՝ համապատասխանաբար գումարած կամ հանած գործարքի հետ կապված ցանկացած ծախսումները: Նշված հոդվածների գծով հետագա վերաչափումների հետ կապված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը նկարագրված է համապատասխան ծանոթագրություններում:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, վարկեր և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա:

- *Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում դեկլարացիայի կողմից նշված ակտիվի ձեռքբերման պահից:

- *Վաճառքի համար մատչելի*

Վաճառքի համար մատչելի ներդրումներն այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի, փոխարժեքների և կապիտալ գործիքների արժեքների փոփոխություններից:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հետագայում հաշվառվում են իրական արժեքով: Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք առաջանում են: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վնասը վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը: Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահարաժիհները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավունք է ձեռք բերում ստանալու այդ շահարաժիհները:

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է դրանց գնանշված շուկայական գների վրա: Եթե գնանշված շուկայական գինն առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով: Հակառակ դեպքում, ներդրումները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները:

- *Վարկեր և դեբիտորական պարտքեր*

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված մարման ժամկետով հաճախորդներին տրված վարկերն ու փոխատվությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Վարկերը որակվում են որպես չաշխատող, երբ դրանց գծով մայր գումարի և տոկոսների հավաքագրումը կասկածելի է դառնում: Չաշխատող վարկերը կարող են վերադասակարգվել որպես աշխատող, երբ ձեռք է բերվում հիմնավորված համոզվածություն՝ ողջամիտ ժամանակահատվածի ընթացքում պայմանագրով նախատեսված չմարված մայր գումարի և տոկոսների հավաքագրման վերաբերյալ:

- *Մինչև մարման ժամկետը պահվող արժեքդրեր*

Ֆիքսված մարման ժամկետով արժեքդրերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները՝ մինչև դրանց մարման ժամկետի լրանալը:

Եթե Բանկի կողմից իրականացվում է մինչև մարման ժամկետը պահվող էական գումարի ակտիվների վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած դրանց գծով հնարավոր կորուստների պահուստները:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունների, որոնք ներառում են նաև առևտրական նպատակով պահվող պարտավորությունները, հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են իրական արժեքով:

Հետզնման պայմանագրեր

Հետզնման պայմանագրերը Բանկի կողմից օգտագործվում են իր առևտրային գործունեության և դրամական միջոցների ընթացիկ կառավարման շրջանակներում: Նշված գործարքները դիտվում են որպես արժեթղթերի ապահովվածությամբ միջոցների տրամադրում:

Հետզնման պայմանագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես առևտրական նպատակներով պահվող կամ վաճառքի համար մատչելի արժեթղթեր, իսկ այդ պայմանագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածներում:

Հետզնման պայմանագրով ձեռքբերված արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ հողվածներում:

Ձեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին: Այս դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով՝ որպես առևտրական նպատակներով պարտավորություն:

Արժեթղթերի գնումից և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախսն իրենցից ներկայացնում են տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են համապատասխան հետզնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում:

Վարձակալություն

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Ֆինանսական ակտիվն արժեզրկված է, եթե նրա հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք առկա են օբյեկտիվ փաստեր, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը կարող է լինել արժեզրկված: Ցանկացած նման հայտանիշների առկայության դեպքում ամորտիզացված կամ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է հետևյալ կերպ.

-Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվների հնարավոր կորուստների պահուստի գումարն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (ներառյալ երաշխիքների իրագործումից և գրավների իրացումից փոխհատուցվող գումարները) ներկա արժեքի միջև տարբերություն:

Հատուկ պահուստը ձևավորվում է ռիսկային ակտիվների մանրամասն գնահատման արդյունքում: Ի լրումն, ընդհանուր պահուստի գումարները ձևավորվում են այն ռիսկերի նվազեցման նպատակով, որոնք թեև հատուկ ձևով բացահայտված չեն, սակայն գոյություն ունեն բանկային ակտիվների ցանկացած պորտֆելում: Դեկավարության կողմից պահուստի գումարի գնահատումը կատարվում է ելնելով անցյալում կորուստներ ունենալու Բանկի փորձից, պորտֆելին ներհատուկ և նրանում գոյություն ունեցող ռիսկերից, բացասական բնույթի իրավիճակներից, որոնք կարող են ազդեցություն թողնել վարկը մարելու վարկառուի հնարավորությունների վրա, ինչպես նաև ապահովվածություն հանդիսացող գրավի գնահատված արժեքից և ընթացիկ տնտեսական պայմաններից:

Վարկերի հնարավոր կորուստների գումարի գնահատումը նախատեսում է որոշակի դատողություններ: Այն դեպքում, երբ հնարավոր է դառնում, որ Բանկը կոնկրետ ժամանակաշրջանում կարող է ունենալ որոշակի կորուստներ, որոնք հիմք են հանդիսանում պահուստի ձևավորման համար, վարկային պորտֆելին բնորոշ վնասներն հատուցելու համար բավականաչափ պահուստի գումարի որոշումն իրականացվում է դեկավարության կողմից կատարվող համապատասխան դատողությունների հիման վրա:

Վարկերի կորուստների գծով պահուստի գումարի ընդհանուր փոփոխությունը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Երբ վարկի գումարը դառնում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում համապատասխան պահուստի հաշվին: Եթե պահուստին հատկացումներ կատարելուց հետո տեղի ունեցող դեպքերի արդյունքում պարզ է դառնում, որ հնարավոր կորուստի գումարը փոքրանում է, ապա համապատասխան պահուստի հակադարձման գումարը գրանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

- Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ

Եթե իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի գծով վնասը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում և առկա է օբյեկտիվ վկայություն, որ ակտիվն արժեզրկված է, ապա կուտակված գուտ վնասը, որը ճանաչվել էր ուղղակիորեն սեփական կապիտալում, հանվում է սեփական կապիտալից և ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, նույնիսկ, երբ ֆինանսական ակտիվը չի ապաճանաչվել:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված ամորտիզացիայի տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքն ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլ ոչ նյութական ակտիվներից, որոնք հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռքբերման արժեքով և ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ դրանց օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, ինչը չի գերազանցում 10 տարին:

Այն ծախսումները, որոնք բարձրացնում կամ երկարացնում են համակարգչային ծրագրերի արդյունավետությունն ու շահագործումը՝ դրանց սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշներից, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ծրագրի սկզբնական արժեքին: Այս ծախսումները ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքն ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Հանակարգիչներ	4	25
Տրանսպորտային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	5	20

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալական պայմանագրի գործողության մնացորդային ժամկետի ընթացքում: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումներն ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներառվում է գործառնական եկամուտներում:

Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասին վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

Բաժնետիրական կապիտալ և հետգնված բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը ներառված են սեփական կապիտալում: Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են սեփական կապիտալում այն ժամանակաշրջանում, երբ դրանց վճարումը հաստատվում է Բանկի բաժնետերերի կողմից: Ընթացիկ տարվան վերաբերվող շահաբաժինները, որոնց վճարումը հայտարարվել է հաշվեկշռի ամսաթվից հետո, բացահայտվում են հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցող իրադարձությունների ծանոթագրությունում:

Որոշակի դեպքերում և համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի, Բանկը կարող է հետ գնել իր բաժնետոմսերը: Այս դեպքում վճարված փոխհատուցումը նվազեցվում է բաժնետիրական կապիտալից և ներկայացվում է որպես հետգնված բաժնետոմսեր՝ մինչև վերջիններիս չեղյալ ճանաչումը: Եթե նշված բաժնետոմսերը հետագայում վաճառվում կամ վերաբողարկվում են, ստացված ցանկացած փոխհատուցումը ներառվում է բաժնետիրական կապիտալում:

Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին

Բանկում աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը պետական սոցիալական ապահովագրության հիմնադրամին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաբոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերն արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

Պահուստներ, պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են ծանոթագրություններում: Սակայն պայմանական պարտավորությունները չեն բացահայտվում, երբ դրանց մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է:

Պայմանական ակտիվները չեն ճանաչվում ֆինանսական հաշվետվություններում, այլ բացահայտվում են, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը հավանական է դառնում:

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հողվածների գծով հնարավոր կորուստների պահուստի ստեղծման ընթացակարգը համապատասխանում է հաճախորդներին տրամադրված վարկերի և փոխատվությունների գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման ընթացակարգին, որը նկարագրված է «Հնարավոր կորուստների պահուստ» բաժնում:

Համադրելի տեղեկատվություն

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարվա հետ համադրելիության ապահովման նպատակով:

4. Տոկոսային եկամուտներ և ծախսեր

	2005թ.	2004թ.
Տոկոսային եկամուտներ		
Ընթացիկ հաշիվներ, վարկեր և ավանդներ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում	12,356	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	134,874	-
Ներդրումներ	104,040	-
Հետգնման պայմանագրեր	7,532	-
	258,802	-
Տոկոսային ծախսեր		
Ընթացիկ հաշիվներ, վարկեր և ավանդներ բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	28,324	-
Հաճախորդների ժամկետային ավանդներ և ընթացիկ հաշիվներ	5,853	-
Հետգնման պայմանագրեր	10,509	-
	44,686	-

5. Այլ գործառնական եկամուտ

	2005թ.	2004թ.
Ստացված տույժեր	68	84
Այլ եկամուտ	3	-
	71	84

6. Հնարավոր կորուստների պահուստներ

	Ծանոթ.	2005թ.	2004թ.
<i>Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով</i>			
Սկզբնական մնացորդ		-	-
Մասհանում պահուստին		2,246	-
Վերջնական մնացորդ	9	2,246	-
<i>Հաճախորդներին տրված վարկերի, փոխադրությունների գծով</i>			
Սկզբնական մնացորդ		-	-
Մասհանում պահուստին		23,592	-
Վերջնական մնացորդ	10	23,592	-
<i>Այլ ակտիվների գծով</i>			
Սկզբնական մնացորդ		-	-
Մասհանում պահուստին		86	-
Վերջնական մնացորդ	14	86	-
Ընդամենը մասհանումներ		25,924	-

7. Այլ գործառնական ծախսեր

	2005թ.	2004թ.
Անձնակազմի գծով ծախսեր	103,238	7,195
Հատկացումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամին	8,815	564
Մաշվածություն և ամորտիզացիա	12,132	535
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	15,867	232
Գործուղման ծախսեր	5,322	-
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	1,880	120
Նյութական ակտիվների վերանորոգման և պահպանման ծախսեր	1,758	125
Գրասենյակային ծախսեր	1,020	291
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	20,363	1,011
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	8,267	-
Անվտանգության գծով ծախսեր	1,763	-
Հարկեր, բացառությամբ շահութահարկից	6,529	682
Այլ ծախսեր	19,299	43
	206,253	10,798

8. Գրանական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում

	2005թ.	2004թ.
Թրթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	330,100	49,610
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ (ժանոթ. 9)	89,562	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	419,662	49,610

Թրթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են ՀՀ բանկային օրենսդրության համաձայն Բանկի ներգրավված միջոցների նվազագույնը 8%-ի չափով (31.12.2004թ.-ին 6%) հաշվարկված պարտադիր պահուստավորման ենթակա դրամական միջոցներ: Ընդ որում, ՀՀ դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է ՀՀ դրամով, եվրո արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց՝ եվրո արտարժույթով, իսկ մնացած արտարժույթներով ներգրավված միջոցների դիմաց՝ ԱՄՆ դոլարով: Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների նկատմամբ Բանկը ստանում է տարեկան 0% (31.12.2004թ.-ին տարեկան 3%):

9. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Բանկը արտասահմանյան և հայկական բանկերի հետ ակտիվ գործունեություն է ծավալում միջազգային և տեղական փողի շուկաներում՝ ներգրավելով և տեղաբաշխելով դեպոզիտներ, ստանալով և տրամադրելով միջբանկային վարկեր:

	2005թ.	2004թ.
Ընթացիկ հաշիվներ		
*ՏՀԶԿ երկրների բանկեր	89,101	-
Ոչ ՏՀԶԿ երկրների (բացառությամբ ՀՀ) բանկեր	461	-
	89,562	-
Միջբանկային վարկեր և ավանդներ		
ՀՀ բանկեր և ֆինանսական կազմակերպություններ.		
- հետգնման պայմանագրեր	180,657	-
ՏՀԶԿ երկրների բանկեր	135,105	-
	315,762	-
Բանկերի նկատմամբ պահանջների գծով հնարավոր կորուստների պահուստ (տես ծանոթ. 6)	(2,246)	-
	403,078	-

* ՏՀԶԿ (OECD)՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

Հաշվետու տարում Բանկը տեղաբաշխել է ընդհանուր ծավալով 41,1 մլն. ԱՄՆ դոլարի, 5,2 մլն. եվրոյի և 7590 մլն. ՀՀ դրամի միջբանկային վարկեր և ավանդներ, ինչպես նաև կնքել է 6 սրբ. ՀՀ դրամի ընդհանուր ծավալով հետզնման պայմանագրեր:

10. Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ

Տրամադրված վարկերի և փոխառվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

	2005թ.	2004թ.
Պետական ձեռնարկություններ	20,000	-
Մասնավոր ձեռնարկություններ	1,913,362	-
Ֆիզիկական անձինք	425,846	-
Հաշվեգրված տոկոսներ	16,101	-
	2,375,309	-
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (տես ծանոթ. 6)	(23,592)	-
	2,351,717	-

31.12.05թ. դրությամբ վարկային պորտֆելը բաղկացած է թվով 17 վարկերից, որից 7 խոշոր վարկառուներին տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմում է վարկային պորտֆելի 90%-ը: Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը կազմել է 15.43% (ՀՀ ԿԲ-ի կողմից մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը սահմանված է 20 %):

Բանկը սկսել է տրամադրել վարկեր հաշվետու տարվա մայիսից: Ընդհանուր առմամբ մայիս-դեկտեմբեր ամիսներին տրամադրվել է դրամային համարժեքով 2,408 մլն. դրամի վարկեր:

Համախառն վարկային պորտֆելի (առանց հաշվի առնելու հնարավոր կորուստների պահուստի գումարը) վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների, ունի հետևյալ տեսքը.

	2005թ.	%	2004թ.	%
Արդյունաբերություն	1,463,304	62	-	-
Շինարարություն	450,057	19	-	-
Ծառայությունների ոլորտ	333,000	14	-	-
Հիփոթեքային վարկեր	92,847	4	-	-
Այլ	20,000	1	-	-
Հաշվեգրված տոկոսներ	16,101	-	-	-
	2,375,309	100	-	-

Հաճախորդների գծով վարկային պորտֆելի աշխարհագրական վերլուծությունը հաճախորդների ռեզիդենտության առումով, ունի հետևյալ տեսքը.

	2005թ.	2004թ.
ՀՀ ռեզիդենտներ	2,314,189	-
ՏՀՀԿ երկրների ռեզիդենտներ	45,019	-
Հաշվեգրված տոկոսներ	16,101	-
	2,375,309	-
Հաճախորդներին տրված վարկերի և փոխառվությունների գծով հնարավոր կորուստների պահուստ (տես ծանոթ. 6)	(23,592)	-
	2,351,717	-

11. Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Պետական արժեթղթեր	2005թ.	2004թ.
ՀՀ պետական պարտատոմսեր	2,116,386	-
ՏՀԶԿ երկրների պետական պարտատոմսեր	395,690	-
Ոչ ՏՀԶԿ երկրների պետական պարտատոմսեր	119,807	-
Հաշվեգրված տոկոսներ	27,375	-
	2,659,258	-

ՀՀ պետական պարտատոմսերից 249,861 հազ. դրամ և 949,888 հազ. դրամ իրական արժեքով պարտատոմսերը համապատասխանաբար հանդիսանում են հետզնման պայմանագրերով վաճառված և գրավադրված: ՏՀԶԿ երկրների պետական պարտատոմսերից 399,821 հազ. դրամ իրական արժեքով պարտատոմսերը հանդիսանում են գրավադրված պարտատոմսեր:

Զնայած այն հանգամանքին, որ բանկը պետական պարտատոմսերի շուկայում իր գործունեությունը սկսել է 2005 թ.-ի մայիս ամսից, այն կարճ ժամանակահատվածում ակտիվորեն ներգրավվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարտատոմսերով իրականացվող գործառնություններին: Ավելացնենք նաև որ բանկը 2005 թ.-ի ընթացքում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունից ստացել է ՀՀ պետական (զանձապետական) երկարաժամկետ արժեկտրոնային, միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային, միջին ժամկետայնության արժեկտրոնային և կարճաժամկետ պարտատոմսերի շուկայում դիլերի կարգավիճակ, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պետական պարտատոմսերի դիլերի կարգավիճակ: Վերը նշվածը արդյունք էր բանկի կողմից պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում ծավալած ակտիվ գործունեության: Այսպես 2005թ.-ի ընթացքում ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի կողմից իրականացվել է մոտ 25 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսերի առուվաճառք:

Դիտարկվող ժամանակահատվածում բանկը գործառնություններ սկսեց իրականացնել միջազգային ֆինանսական շուկաներում: Ընդ որում հաշվի առնելով բանկի ներդրումային ուղենիշները բանկը ներդրումներ է իրականացրել ամերիկյան, եվրոգոտու երկրների և ռուսաստանի դաշնության պետական պարտատոմսերում: ԱՄՆ դոլարով արտահայտված պարտատոմսերով իրականացրած գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 5,55 մլն. ԱՄՆ դոլար և 2,1 մլն. եվրոյով արտահայտված պարտատոմսերով: Պորտֆելի միջին օրեկան ծավալը կազմել է մոտ 900 հազար ԱՄՆ դոլար:

Ներդրումների շարժն ունի հետևյալ տեսքը.

	Վաճառքի համար մատչելի	
Առ 1 հունվարի 2005թ.		-
Ավելացում		15,915,104
Օտարում (վաճառք կամ մարում)		(13,256,357)
Իրական արժեքի փոփոխությունից օգուտ		511
31 դեկտեմբերի 2005թ-ի դրությամբ		2,659,258

12. Հիմնական միջոցներ

	Համակարգ- կապի միջոց	Փոխադրա- միջոցներ	Այլ հիմն. միջոց	Ընդամենը
Սկզբնական արժեք				
7 հոկտ. 2004թ.-ի դրությամբ	-	-	-	-
Ավելացում	29,807	5,073	6,310	41,190
31 դեկտ. 2004թ.-ի դրությամբ	29,807	5,073	6,310	41,190
Ավելացում	11,277	-	6,017	17,294
31 դեկտ. 2005թ.-ի դրությամբ	41,084	5,073	12,327	58,484
Կուտակված մաշվածություն				
7 հոկտ. 2004թ.-ի դրությամբ	-	-	-	-
Ավելացում	352	103	80	535
31 դեկտ. 2004թ.-ի դրությամբ	352	103	80	535
Ավելացում	7,987	1,014	1,847	10,848
31 դեկտ. 2005թ.-ի դրությամբ	8,339	1,117	1,927	11,383
Չուտ հաշվեկշռային արժեք				
31 դեկտ. 2005թ.-ի դրությամբ	32,745	3,956	10,400	47,101
31 դեկտ. 2004թ.-ի դրությամբ	29,455	4,970	6,230	40,655

13. Ոչ նյութական ակտիվներ

	Արտոնա- գրիբ	Համակարգ- չային ծրագիր	Այլ ոչ նյութ. ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
7 հոկտ. 2004թ.-ի դրությամբ	-	-	-	-
Ավելացում	-	120	25	145
31 դեկտ. 2004թ.-ի դրությամբ	-	120	25	145
Ավելացում	529	27,755	291	28,575
31 դեկտ. 2005թ.-ի դրությամբ	529	27,875	316	28,720
Կուտակված ամորտիզացիա				
31 դեկտ. 2004թ.-ի դրությամբ	-	-	-	-
Ավելացում	216	1,049	19	1,284
31 դեկտ. 2005թ.-ի դրությամբ	216	1,049	19	1,284
Չուտ հաշվեկշռային արժեք				
31 դեկտ. 2005թ.-ի դրությամբ	313	26,826	297	27,436
31 դեկտ. 2004թ.-ի դրությամբ	-	120	25	145

14. Այլ ակտիվներ

	2005թ.	2004թ.
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	3,815	14,783
Հաշվարկներ աշխատակիցների հետ	161	66
Այլ ակտիվներ	24	15
	4,000	14,864
Այլ ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստ (տես ծանոթ. 6)	(86)	-
	3,914	14,864
Ստացվելիք գումարներ	4,500	4,501
Շահագործումից դուրս գտնվող ոչ նյութական ակտիվ	540	-
Կանխավճարներ շահութահարկի գծով	1,171	-
Պահեստ	50	75
	10,175	19,440

15. Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	2005թ.	2004թ.
Ընթացիկ հաշիվներ		
ՀՀ բանկեր	415,415	-
Միջբանկային վարկեր և ավանդներ		
ՀՀ բանկեր և այլ ֆինանսական կազմակերպություններ		
- վարկեր և ավանդներ	875,999	-
- հետզման պայմանագրեր	255,516	-
ՏՀԶԿ երկրների բանկեր	385,446	-
	1,516,961	-
	1,932,376	-

ՏՀԶԿ երկրների բանկերից ստացված վարկերը ներառում են Ռ-այֆայզն (Ավստրիա) բանկից տարեկան 5.08% տոկոսադրույքով և 17.03.2006թ.-ին մարման ժամկետով ստացված 847,337 ԱՄՆ դոլար վարկը, որի համար ապահովվածություն են հանդիսանում ՏՀԶԿ երկրների պետական պարտատոմսերը (տես ծանոթ. 11):

Հաշվետու տարում Բանկը ներգրավել է 11,4 մլն. ԱՄՆ դոլարի և 1298 մլն. ՀՀ դրամի ընդհանուր ծավալով միջբանկային վարկեր և ավանդներ, ինչպես նաև կնքել է մոտ 10 մլրդ ՀՀ դրամի հետզման պայմանագրեր:

16. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

	2005թ.	2004թ.
Իրավաբանական անձինք		
- Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	115,400	-
Ֆիզիկական անձինք		
- Ընթացիկ/ցպահանջ հաշիվներ	6,797	-
- Ժամկետային ավանդներ	789,714	-
	796,511	-
	911,911	-

17. Բաժնետիրական կապիտալ

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 3,000,000 հազ. դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 5,000 սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 600,000 դրամ անվանական արժեքով: Բանկի միակ բաժնետերն է հանդիսանում շվեյցարացի գործարար Վարդան Սիրմաքեար:

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից հետգնված բաժնետոմսեր չեն եղել:

18. Շահութահարկի գծով փոխհատուցում

	2005թ.	2004թ.
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	(3,329)	-
	(3,329)	-

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2004թ.՝ 20%):

ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՆՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների ընթացիկ արժեքների միջև հանգեցնում է հարկման և ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով ժամանակավոր տարբերությունների առաջացմանը: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով փոխհատուցման և հաշվապահական վնասի միջև փոխկապակցվածությունը.

	2005թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)	2004թ.	Արդյունավետ դրույքաչափ (%)
Վնասը մինչև հարկումը	(14,368)	-	(10,479)	-
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	(2,874)	(20)	(2,096)	(20)
<i>Հարկման նպատակով նկատությունների և ծախսերի նշգրտումներ ոչ ժամանակավոր տարբերությունների գծով</i>				
(Դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	1,299	9.0	(63)	(0.6)
Չնվազեցվող ծախսեր	380	2.7	24	0.2
Հետաձգված հարկային ակտիվի գնահատում	-	-	2,134	20.4
Գնահատված հետաձգված հարկային ակտիվի ճանաչում	(2,134)	(14.9)	-	-
Շահութահարկի գծով փոխհատուցում	(3,329)	23.2	-	-

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

	2005թ.	2004թ.
<i>Հերաչգված հարկային ակտիվներ</i>		
Կրեդիտորական պարտքեր	846	63
Փոխանցվող հարկային վնաս	2,628	2,071
	3,474	2,134
Հետաձգված հարկային ակտիվի գնահատում	-	(2,134)
	3,474	-
<i>Հերաչգված հարկային պարտավորություն</i>		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատում	(102)	-
Պահուստների ճշգրտում	(145)	-
	(247)	-
Հետաձգված հարկային ակտիվ	3,227	-

31.12.04թ. դրությամբ հետաձգված հարկային ակտիվները՝ 2,134 հազ. դրամ գումարով, չեն ճանաչվել դրանց իրացման հավանականության անորոշության պատճառով:

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

	Մնացորդը 31.12.2004թ.-ի դրությամբ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Մեփական կապիտալում ճանաչված	Մնացորդը 31.12.2005թ.-ի դրությամբ
<i>Հերաչգված հարկային ակտիվներ</i>				
Կրեդիտորական պարտքեր	-	846	-	846
Փոխանցվող հարկային վնաս	-	2,628	-	2,628
	-	3,474	-	3,474
<i>Հերաչգված հարկային պարտավորություն</i>				
Վաճառքի համար մատչելի ֆին. ակտիվների վերագնահատում	-	-	(102)	(102)
Պահուստների ճշգրտում	-	(145)	-	(145)
	-	(145)	(102)	(247)
Հետաձգված հարկային ակտիվ	-	3,329	(102)	3,227

19. Պահուստներ, պայմանական դեպքեր և պոտենցիալ պարտավորություններ

19.1. Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտն աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

31.12.05թ. դրությամբ Բանկի հանդեպ չկային դատական հայցեր:

Հետևաբար, Բանկի կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով լրացուցիչ պահուստավորումներ չեն կատարվել:

19.2. Չօգտագործված վարկային գծեր

	2005թ.	2004թ.
Չօգտագործված վարկային գծեր	72,689	-

19.3. Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

Բանկն իր գործունեությունն ապահովելու նպատակով վարձակալում է տարածքներ:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

	2005թ.	2004թ.
Մինչև 1 տարի	21,069	17,490
1-5 տարի	61,451	68,503
5 տարուց ավելի	-	-
	82,520	85,993

20. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված և նրանց կողմից վերահսկվող այլ անձինք և կազմակերպությունները:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, թրքակցային հաշիվները, ավանդները: Նշված գործարքներն իրականացվել են շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Բանկի հետ կապված կողմերի գործարքների գծով առկա են հետևյալ մնացորդները.

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	2005թ.	2004թ.
Մնացորդը առ 1 հունվարի	-	-
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	7,000	-
Տարվա ընթացքում մարված վարկեր	(585)	-
Մնացորդը 31 դեկտեմբերի դրությամբ	6,415	-
Տոկոսային եկամուտ	325	-
Պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ	2005թ.	2004թ.
Մնացորդը առ 1 հունվարի	-	-
Տարվա ընթացքում ստացված գումար	2,183,187	-
Տարվա ընթացքում վճարված գումար	(1,730,977)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	452,210	-
Տոկոսային ծախս	8,695	-
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2005թ.	2004թ.
Մնացորդը առ 1 հունվարի	-	-
Տարվա ընթացքում ստացված գումար	731,615	-
Տարվա ընթացքում վճարված գումար	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	731,615	-
Տոկոսային ծախս	5,743	-

Վերը նշված աղյուսակում ներկայացված տվյալները ներառում են կապակցված կողմերի հետ տեղի ունեցած հետևյալ գործարքները.

Վարկը տրամադրվել է Բանկի աշխատանքային ստորաբաժանման ղեկավարին:

Պարտավորություններն այլ բանկերի նկատմամբ իրենից ներկայացնում են ՀՀ ռեզիդենտ բանկի ժամկետային ավանդի (45,019 հազ. ՀՀ դրամ) և քրթակցային հաշվի (407,191 հազ. ՀՀ դրամ) հանրագումար:

Պարտավորությունը հաճախորդների նկատմամբ իրենից ներկայացնում է Բանկի բաժնետիրոջ հետ փոխկապակցված անձից ներգրավված ժամկետային ավանդ:

2005թ. Բանկի ղեկավարությանը վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների ընդհանուր գումարը կազմում է 47,969 հազ. դրամ (2004թ.՝ 4,761 հազ. դրամ):

21. Ռիսկի կառավարում

Ռիսկի կառավարումը կարևորագույն տարր է համարվում բանկային գործառնությունների իրականացման առումով: Բանկային գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը կապված են վարկային գործառնությունների, իրացվելիության և շուկայում տոկոսադրույքների ու փոխարժեքների տատանումների հետ: Կարևորելով ռիսկերի կառավարումը, Բանկում ստեղծվել է ռիսկերի կառավարման ստորաբաժանում: Ռիսկի կառավարման Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը ներկայացված է ստորև:

Վարկային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է վարկային ռիսկի, որը կապված է գործարքի պայմանագրի կողմի պարտավորության գումարներն ամբողջությամբ չմարելու անկարողության ռիսկի հետ: Բանկը կարգավորում է վարկային ռիսկի մակարդակները՝ մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև վարկավորման ոլորտների կամ աշխարհագրական սեգմենտների գծով ընդունելի ռիսկի գումարների սահմանաչափեր որոշելով (տես վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ վարկավորման ոլորտների ծանոթ. 10): Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և դրանց կառավարումը ենթակա է վերանայման՝ տարեկան կամ ավելի հաճախականությամբ:

Վարկային ռիսկը կարգավորվում է ընթացիկ և պոստենցիալ փոխառուների կողմից տոկոսների և մայր գումարի գծով պարտավորության կատարման կարողության հաճախակի վերլուծության, ինչպես նաև հնարավորության դեպքում վարկային սահմանաչափերի փոփոխման միջոցով: Նշված կառավարումն իրականացվում է նաև գրավի առարկայի, իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից երաշխիքներ պահանջելու միջոցով:

Վարկային ռիսկ պարունակող պարտավորությունները վկայում են այն մասին, որ միջոցները կտրամադրվեն հաճախորդներին նրանց կողմից առաջին իսկ պահանջի դեպքում: Չօգտագործված վարկային գծերի առումով գոյություն ունի նշված պարտավորությունների ընդհանուր գումարին համարժեք վարկային ռիսկ:

Տրամադրված երաշխիքները, որոնք հաստատում են այն փաստը, որ Բանկը կմարի հաճախորդի պարտավորությունները վերջինիս կողմից երրորդ անձանց հանդեպ նշված պարտավորություններ չկատարելու դեպքում, պարունակում են վարկերին բնորոշ նույնանման ռիսկ:

Փաստաթղթային և առևտրային ակրեդիտիվները շատ հաճախ ամբողջությամբ կամ մասնակիորեն ապահովված են լինում հաճախորդների կողմից ներգրավված միջոցներով և, հետևաբար, չեն պարունակում վարկային ռիսկ:

Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումն ունի հետևյալ տեսքը.

2005թ.	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	330,100	-	-	330,100
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	269,324	133,754	-	403,078
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	2,306,832	44,885	-	2,351,717
Ներդրումներ արժեթղթերում	2,137,233	399,819	122,206	2,659,258
	5,043,489	578,458	122,206	5,744,153
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	1,546,930	385,446	-	1,932,376
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	116,065	795,846	-	911,911
	1,662,995	1,181,292	-	2,844,287
Զուտ դիրք	3,380,494	(602,834)	122,206	2,899,866

2004թ.	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	49,610	-	-	49,610
Զուտ դիրք	49,610	-	-	49,610

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը հիմնականում առաջանում է տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի տատանումներից: Տոկոսադրույքի ռիսկը կարգավորվում է օրական կտրվածքով և պարբերաբար վերահսկվում է: Ռիսկի կառավարման միջոցները ներառում են իրացվելության ճնշվածքի, ժամկետայնության և զգայնության վերլուծությունները: Հիմնվելով այդ վերլուծությունների, ինչպես նաև Բանկի կողմից ներգրավված միջոցների արժեքի և շուկայական պայմանների վրա, սահմանվում են հաճախորդների վարկավորման և հաճախորդներից միջոցների ներգրավված սահմանային տոկոսադրույքները, ինչպես նաև ուղեցույցներ են տրվում Բանկի ներդրումային պորտֆելի կառավարման և ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառման վերաբերյալ:

Արտարժույթի փոխարժեքի տատանումների ռիսկը կառավարվում է առանձին արտարժույթների գծով բաց դիրքի և ընդհանուր բաց դիրքի սահմանային գումարների որոշմամբ:

Անհրաժեշտության դեպքում շուկայական ռիսկի ազդեցությունը հետազայում նվազեցվում է ածանցյալ ֆինանսական գործիքների կիրառմամբ:

Արդարժույթի ռիսկ

Հաշվետու տարում Բանկը իրականացրել է ավելի քան 47 մլն. դոլարի, 20 մլն. եվրոյի, 15 մլն. շվեյցարական ֆրանկի արտարժույթի առքուվաճառքի գործառնություններ և ավելի քան 10 մլն. ԱՄՆ դոլարի և 1 մլն. եվրոյի արտարժույթային սվոպ տիպի գարծառնություններ:

Բանկի ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքի վրա ազդեցություն են թողնում օգտագործվող արտարժույթի փոխարժեքի տատանումները: Բանկի ղեկավարության կողմից սահմանաչափեր են որոշվում արտարժույթի և ընդհանուր Բանկի կտրվածքով: Այդ սահմանաչափերը համապատասխանում են ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն պահանջներին:

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, ունի հետևյալ տեսքը.

2005թ.	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	66,577	263,523	-	330,100
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	180,657	222,421	-	403,078
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	1,245,789	1,105,928	-	2,351,717
Ներդրումներ արժեթղթերում	2,137,233	522,025	-	2,659,258
	3,630,256	2,113,897	-	5,744,153
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	665,513	1,266,863	-	1,932,376
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	88,121	823,790	-	911,911
	753,634	2,090,653	-	2,844,287
Զուտ դիրք	2,876,622	23,244	-	2,899,866

2004թ.	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	49,610	-	-	49,610
Չուտ դիրք	49,610	-	-	49,610

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկում տեղաբաշխված ավանդների մարումների, ինչպես նաև ֆինանսական գործիքների գծով պարտավորությունների ժամանակին կատարելու համար բավարար միջոցների առկայության հետ: Իրացվելիության ռիսկը կառավարելու համար Բանկի կողմից օրական կտրվածքով վերահսկման են ենթարկվում հաճախորդների կողմից կատարվող բանկային գործառնությունների հետ կապված դրամական միջոցների ակնկալվող հոսքերը: Սա նույնպես ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների կառավարման գործընթացի մի մասը:

Ստորև ներկայացվում է Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն.

2005թ.	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ակտիվներ							
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	330,100	-	-	-	-	-	330,100
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	403,078	-	-	-	-	-	403,078
Հաճախորդներին տրված վարկեր	64,249	121,395	171,389	221,950	1,772,734	-	2,351,717
Ներդրումներ արժեթղթերում	262,182	91,558	76,171	219,176	519,340	1,490,831	2,659,258
	1,059,609	212,953	247,560	441,126	2,292,074	1,490,831	5,744,153
Պարտավորություններ							
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	717,656	1,214,720	-	-	-	-	1,932,376
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	185,348	-	-	-	726,563	-	911,911
	903,004	1,214,720	-	-	726,563	-	2,844,287
Չուտ դիրք	156,605	(1,001,767)	247,560	441,126	1,565,511	1,490,831	2,899,866
Կուտակային իրացվելիության ճնշվածք	156,605	(845,162)	(597,602)	(156,476)	1,409,035	2,899,866	-

2004թ.	Մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-6 ամիս	6-12 ամիս	1-5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
Ակտիվներ							
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	49,610	-	-	-	-	-	49,610
Զուտ դիքք	49,610	-	-	-	-	-	49,610
Կուտակային իրացվե- լության ճեղքվածք	49,610	49,610	49,610	49,610	49,610	49,610	-

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է Բանկի տոկոսային ռիսկի, ակտիվների ու պարտավորությունների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Այդ պատճառով, ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը բույլ է տալիս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին վերլուծել Բանկի տոկոսային ռիսկը և, հետևաբար, ակնկալվող օգուտները կամ վնասները:

Ֆինանսական գործիքի համար ֆիքսված տոկոսադրույքի գործողության ժամկետը ցույց է տալիս նրա հետ կապված տոկոսադրույքի ռիսկի աստիճանը: Ելնելով ՀՀ բանկային համակարգի առանձնահատկությունից՝ ժամանակահատվածը, որի սահմաններում գործում է շուկայական տոկոսադրույքը, մոտավորապես համընկնում է ֆինանսական գործիքների գերակշռող մասի պայմանագրային ժամկետների հետ, ինչը ներկայացված է վերը նշված պայմանագրային ժամկետների խմբավորման աղյուսակներում:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար արդյունավետ միջին տոկոսադրույքը հետևյալն էր.

	2005թ.		2004թ.	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	1.75	-	-	-
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	3.71	3.31	-	-
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	14.5	13.6	-	-
Ներդրումներ արժեթղթերում	6.1	4.7	-	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	2.85	3.86	-	-
Պարտավորություններ հաճա- խորդների նկատմամբ	-	8	-	-

22. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք

Ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքի վերաբերյալ ստորև ներկայացված բացահայտումները կատարվել են ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ, բացահայտումը և ներկայացումը» պահանջների համաձայն: Ֆինանսական գործիքների իրական արժեքն այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել՝ իրազեկ և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության» գործարքի ընթացքում: Քանի որ Բանկի ֆինանսական գործիքների մեծամասնության համար գործող շուկա գոյություն չունի, իրական արժեքի գնահատումն իրականացվում է դատողությունների հիման վրա՝ ելնելով ընթացիկ տնտեսական իրավիճակից և գործիքին հատուկ ռիսկերից: Ստորև ներկայացված գնահատականներն անհրաժեշտաբար չեն արտացոլում այն գումարները, որոնք Բանկը կստանա որևէ գործիքի գծով իր ներդրումների շուկայական վաճառքից:

31 դեկտեմբերի 2005թ.-ի դրությամբ ֆինանսական գործիքի յուրաքանչյուր դասի իրական արժեքի գնահատման ժամանակ Բանկի կողմից օգտագործվել են հետևյալ մեթոդներն ու գնահատումները:

Կարճաժամկետ մարման պայման ունեցող այնպիսի ֆինանսական գործիքների, ինչպիսիք են՝ կանխիկ դրամական միջոցները, մնացորդները ՀՀ ԿԲ-ում, այլ բանկերի և հաճախորդների նկատմամբ պահանջները և պարտավորությունները, հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին: Երկարաժամկետ մարման պայման ունեցող գործիքների գծով կիրառվող տոկոսադրույքները հիմնված են շուկայական տոկոսադրույքների վրա և, հետևաբար, դրանց հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթերն արտացոլված են իրենց իրական արժեքով:

Վարկային պորտֆելի իրական արժեքը կախված է պորտֆելի յուրաքանչյուր դասի շրջանակներում առանձին վարկի վարկային և տոկոսադրույքային առանձնահատկություններից: Վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդի գնահատումը հաշվի է առնում վարկերի տարբեր դասերին բնորոշ ռիսկերն, ինչը հիմնված է այնպիսի գործոնների վրա, ինչպիսիք են՝ տնտեսական այն ճյուղի իրավիճակը, որտեղ գործում է յուրաքանչյուր փոխառում, յուրաքանչյուր փոխառուի տնտեսական իրավիճակը և ձեռքբերված երաշխիքները: Հետևաբար, վարկերի հնարավոր կորուստների պահուստաֆոնդն այն գեղչի ճշգրիտ գնատականն է, որն արտացոլում է վարկային ռիսկի ազդեցությունը:

23. Կապիտալի համարժեքություն

Բանկի ռիսկով կշռված ակտիվների նկատմամբ ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը 31 դեկտեմբերի 2005թ. դրությամբ կազմել է 105.89%:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի համար սահմանված է ռիսկով կշռված ակտիվների նկատմամբ 12% ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշ:

Բանկի ընդհանուր կապիտալի նորմատիվային մեծությունը 31 դեկտեմբերի 2005թ. դրությամբ կազմում է 2,978,891 հազ. դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2005թ. հուլիսի 1-ից սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ՝ 2,400,000 հազ. դրամ գումարի չափով:

ԸՆԳՀԱՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Անվանում:	«ԱՐՄՍՎԻՍՔԱՆԿ» ՓԲԸ
Լիցենզիա:	ՀՀ ԿԲ-ի կողմից տրված բանկային գործունեության # 84 լիցենզիա, 25.02.2005
Հասցե:	ՀՀ, Երևան 375010, Խանջյան 13/2
ՀՎՀՀ:	02574955
ԿԲ քրթակցային հաշվի համար:	103002102509
Reuters:	ARSJ
SWIFT:	ARSJAM22
Հեռախոս:	+374 10 529593, 584419
Ֆաքս:	+374 10 529591
Էլ-փոստ:	info@armswissbank.am
URL:	www.armswissbank.am
Սպասարկման ժամեր:	9:30 - 17:00

Միջազգային վճարումների համար օգտագործվող ԱՐՄՍՎԻՍՔԱՆԿ-ի հաշիվներն այլ բանկերում 01.03.2006թ. դրությամբ

Ավստրիա

Վիեննա	Raiffeisen Zentralbank Osterreich AG	EUR	RZBA AT WW
		USD	
		Custody Acc	

Շվեյցարիա

Յյուրիխ	UBS AG	CHF	UBSW CH ZH80A
		EUR	
		USD	

Գերմանիա

Ֆրանկֆուրտ Մայնի	Commerzbank AG	EUR	COBA DE FF
		USD	

Ռուսաստանի Գաշնություն

Մոսկվա	International Moscow Bank	RUB	IMBK RU MM
		EUR	
		USD	
		GBP	
		CHF	

Լատվիա

Ռիգա	Rietumu Banka	LVL	RTMBLV2X
		USD	
		EUR	
		RUB	

Հայաստանի Հանրապետություն

Երևան	Central Bank of Armenia	EUR	CBRA AM 22
		USD	
		AMD	
		Custody Acc	

*Private
Investment
Banking*